

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

ՊՈԱԿ

**Մասնագիտությունը**

«Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում»

**Մոդուլի անվանումը՝**

«Մազերի քիմիական ուղղում»

# Արդյունք 1. Տարբերակել մազերը ուղղող նյութերը

## Թեմա 1.1 Մազերը ուղղող նյութեր և դրանց նշանակությունը:

Այս արարողակարգի արդյունքում այլընտրանք կամ շատ գանգուր մազերը ստանում են հարթ և ուղիղ տեսք: Մազերի քիմիական ուղղումը՝ ի տարբերություն քիմիական գանգրացման, ավելի ուշ է իր օգտագործումը ստացել: Այն իր պատմությունը սկսել է ընդամենը XXI դարի սկզբներում և ունի շատ մեծ պահամջարկ ինչպես կանանց այնպես էլ տղամարդկանց սրահներում: Մակայն հարկ է նշել, որ այս գործընթացն էլ գերծ չէ վնասակար հետևանքներից, ինչպես և մազերի քիմիական ուղղումը:

Մազերի քիմիական ուղղման համար օգտագործվում է միջոցներ որոնց հիմքում ընկած են նատրիումի հիդրօքսիդը, գուանիդինի հիդրօքսիդը և ամոնիումի թեոգլիկոլատը:

**Նատրիումի հիդրօքսիդը կամ կաուստիկ սոդայի** միջոցով մազերի ուղղումը ամենաարդյունավետն է: Այն ոչնչացնում է մազերի արտաքին կերատինե թաղանթը և փափկեցնելով՝ ներթափանցում է խորը մազի մեջ՝ դեպի ներքին շերտ մազերի մեռած բջիջների միջով: Նատրիումի հիդրօքսիդը-խիստ ալկալային նյութ է և այն անմիջապես փոխազդում է մազերի գլխավոր սպիտակուցի – կերատինի հետ, և առանձնացնում է ջուրը սպիտակուցից: Այդ իսկ պատճառով նատրիումի հիդրօքսիդը կիրառում են շատ գանգրություն ունեցող մազերի ուղղման համար:

**Գուանիդինի հիդրօքսիդը** մի քիչ մողմ է ազդում քան նատրիումի հիդրօքսիդը: Քանի որ այս նյութը ստեղծվել սպիտակուցից, այն չի ոչնչացնում մազերի կերատինային շերտը: Այն աշխատում է սպիտակուցների տարրերի փոխարինման հաշվին: Գուանիդինի հիդրօքսիդը թունավոր նյութ է, որը առաջացնում է այրվածքներ և մաշկի չորացում և պետք է լինել շատ զգույշ այն կիրառելու դեպքում: Այս նյութով մազերի քիմիական ուղղումից հետո հարկավոր է ուշադրություն դարձնել մազերի խոնավացմանը:

**Ամոնիումի թեոգլիկոլատի** օգտագործումը այս դեպքում համարվում է ամենամեղմ միջոցը: Դրա գործողությունը նման է նատրիումի հիդրօքսիդով կատարած քիմիական ուղղման, միայն այն տարբերությամբ, որ չի ոչնչացնում կուտիկուլան: Այս նյութով աշխատելիս նյունպես հարկավոր է լինել զգույշ, քանի որ կարող է առաջանալ մաշկի այրվածքներ և գրգռվածություն: Ամոնիումի թեոգլիկոլատով մազերը ուղղելուց հետո մազերը դառնում են չոր և փխրուն: Այս նյութով հարավոր է ուղղել ոչ այնքան գանգուր մազերը: Յուրաքանչյուր մազերի տեսակի համար առանձնահատուկ մոտեցում է հարկավոր. ուժեղ նյութերով խորհուրդ չի տրվում ուղղել բարակ և չոր մազերը, ինչպես նաև կարելի է համատեղել մի քանի նյութերի օգտագործում, բայց դա կատարվում է մի քանի փուլերի միջոցով:

### Հարցեր

Թվարկել մազերի քիմիական ուղղման համար օգտագործվող նյութերը: -----

-----

Ներկայացնել նյութերի տեսակների օգտագործման սկզբունքը: -----

-----

**Թեմա 1.2 Ուղղող նյութերով աշխատելու հաջորդականություն:**

Մազերը քիմիական ուղղումից առաջ հարկավոր է լվանալ և չորացնել, որպեսզի հեռացվի մազերի վրայից կեղտը, օգտագործված լաքը, մուսը և այլն: Այնուհետև գլխի մաշկը՝ այրվածքներից և չորանալուց պաշտպանելու նպատակով, քսում են յուղոտ քսուկ կամ վազելին: Այնուհետև քիմիական նյութը լցնում են **ոչ մետաղյա** պնակի մեջ և մազերի արմատից մեկ սմ հեռավորությամբ քսվում է քիմիական նյութը վրցինի միջոցով: Քսելու ընթացքում արնդմեջ մազերը սանրում են իրենց երկայնքով, որպեսզի ամբողջությամբ տարածվի նյութը և մազերը հեշտ ենթարկվի ուղղման: Մազերի վրա նյութի մնալու տևողությունը որոշվում է կախված մազերի վիճակից: Մազերի փափկելուց և ուղվելուց հետո նյութը հարկավոր է հեռացնել մազերից՝ շատ լավ լվացնելով: Մազերը դրանից հետո մշակում են **ֆիքսատորներով** (ինչպես քիմիական զանգրացման դեպքում) և նույնպես լվանում: Քիմիական նյութի և ֆիքսատորների քսումը հարկավոր է սկսել ծոծրակային մասից, բաժանելով մազերը մետեղից երկու մասի, սանրվում են մազերերը հաջորդաբար դեպի հետ, այնուհետև քունքային և գագաթային մասերը: Մազերի չորացումը կարվում է վարսահարդարիչի օգնությամբ՝ արմատների չրացումով, հետո վարսարդուկի միջոցով ուղղվում են մազերը:

**Գործնական աշխատանք**

Ցուցադրել մազերի քիմիական ուղղման աշխատանքների հաջորդականությունը:

**Թեմա 1.3 Մազերը ուղղող նյութերի կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները:**

Քիմիական ուղղման ժամանակ անհրաժեշտ է պահպանել հետևյալ անվտանգության կանոնները.

Օգտագործել միայն պլաստմասե կամ կերամիկական պնակներ քիմիական նյութերով աշխատելու դեպքում (պնակներ, վրցիններ, սանրներ)

Նախքան քիմիական նյութերով աշխատելը հարկավոր է ստուգել տվյալ անձի այդ նյութի նկատմամբ զգայնությունը (ալերգիա)

Գլխի մաշկը՝ պաշտպանելու համար, մինչ քիմիական նյութը քսելը յուղոտ քսուկով պատել այն:

Պետք է զգույշ քսել թե քիմիական նյութը և թե ֆիքսատորը մաշկը չվնասելու համար:

Ամբողջ գործընթացը անհրաժեշտ է կատարել լավ օդափոխվող սենյակում:

**Հարցեր**

Թվարկել անվտանգության տեխնիկայի կանոնները: -----  
-----  
-----

**Արդյունք 2. Կատարել մազերի ուղղումը ըստ հրահանգի**

**Թեմա 2.1 Ուղղման ժամանակ կիրառվող գործիքները, օժանդակ պարագաները և նյութերը**

Ուղղման ժամանակ կիրառվում են հետևյալ գործիքները, օժանդակ պարագաները և նյութերը

- երկու ոչ մետաղական պնակ. մեկը՝ բաղադրության, մյուսը՝ ֆիքսաժի համար
- երկու վրձին՝ բաղադրության և ֆիքսաժի համար
- անջրաթափանց ծածկոց
- ձեռնոցներ
- չափաբաժակ
- քիմիական նյութ
- ֆիքսաժ
- գլխի մաշկի պաշտպանիչ քսուկ
- սպրիչ
- վարսահարդարիչ և վարսարդուկ

### **Հարցեր**

Որո՞նք են ուղղման ժամանակ կիրառվող գործիքները, օժանդակ պարագաները և նյութերը:-----

### **Թեմա 2.2Մազերի նախապատրաստում ուղղման համար**

#### **Գործնական աշխատանք**

Կատարել մազերի նախապատրաստում ուղղման համար:

### **Թեմա 2.3Մազերի ուղղում**

#### **Գործնական աշխատանք**

Կատարել մազերի ուղղում:

### **Թեմա 2.4Աշխատանքի ավարտական գործողություններ**

Քիմիական ուղղումը - դա մի մեծ սթրես է մազերի համար, այդ իսկ պատճառով մազերի հարկավոր է հատուկ խնամք:

Քիմիական ուղղումից հետո խորհուրդ չի տրվում լվանլ մազերը երեք օրվա ընթացքում , անել մազերի հարդարում կամ սանրվածքներ, օգտագործել մազակալներ: Այս ընթացքում վերականգնում է մազերի կառուցվածքը, և ցանկացած մեխանիկական ազդեցություն կարող է վնասել մազերին: Մազերի լվանալու համար հարկավոր է օգտագործել հատուկ շամպուն վերականգնող նյութերով մազերի ուղղման համար: Նաև խորհուրդ է տրվում միշտ օգտագործել մազերի կոնդիցիոներ: Անհրաժեշտ չէ չորացնել մազերը վարսահարդարիչով , քանի որ քիմիական ուղղման ժամանակ տեղի է ունենում մազի ջրազրկում: Սանրել մազերը քիմիական ուղղումից հետո կարելի է միայն փափուկ լայն ատամներով սանրով կամ խոզանակով: Որպեսզի մազերը վերականգնվեն և լինեն առողջ , լավ խնամված տեսք ունենան, պետք է կանոնավոր կատարել սնուցող և վերականգնող դիմակներ: Բացի այդ, կարևոր է ուտել հավասարակշռված սնունդ ,որպեսզի մազերը և գլխամաշկը ստանան բոլոր անհրաժեշտ հանքային միկրոէլեմենտները և վիտամինները:

#### **Գործնական աշխատանք**

Կատարել մազերի քիմիական ուղղման ավարտական աշխատանքները: